

դղինկաները գարիի գաշտերը կը փը-
նացնեն, վասն զի իրենց կտուցը շատ
սկար է, ու ձևն ալ բոլորովին անյար-
մար:

Դոդինկային փետուրները շատ ան-
հաստատ են ու շուտ մը կը թափին, ա-
նոր համար է որ երբ մորթերնին Եւ-
րոպա կը բերուի գրեթէ բոլորովին գե-
ղեցկութիւննին կորսնցուցած կ'ըլլան:
Դիւրին է Եւրոպայի մէջ ալ գոգինկա
պահելը, կ'ըսէ բնապատում մը, միայն
թէ ըստ իրենց բնութեանն յարմար
մասնաւոր կէս տղմուտ ու թաց տեղ մը
չինուի. իսկ իրենց կերակուրին համար
բաւական է ջրի մէջ թաթխած հացի
միջուկը, կամ շաքարի եղէզիս միջու-
կը, և նոյն իսկ շաքարը՝ եթէ մանա-
ւանդ քիչ մը կակուղցուցած ըլլայ:

Նապէք և Տահէր, ու Արարացոց ընկերսիրուրիւնը :

Դապէք անունով արաբացի մը մա-
տակ ձի մը ունէր որ բոլոր նոյն գաւա-
ռին մէջ շատ անուանի էր. ուրիշ ա-
րաբացի մըն ալ Տահէր անունով սաս-
տիկ հաւանած ըլլալով այս ձիուն կ'ու-
ղէր գնել. ուստի ինչչափ որ ուղար և
ուրիշ հարստութեան բաներ ունէր
յանձն առաւ տալու՝ միայն թէ տէրը
իրեն ծախէ ան ուզած ձին. բայց եր-
բոր ամենայն յցյու պարապը ելաւ,
պապիսի հնարագիտութիւն մը մոտա-
ծեց. երեսը գունաւորեց, պատռած ըզ-
գեստներ հագաւ ու հաշմանդամ մու-
րացկան մը ձևացուց ինքզինքը, և գնաց
Դապէքին անցնելու ձամբուն վրայ իր-
րկ ողորմելի հիւանդ աղքատ մը ան-
կիւն մը քաշուեցաւ կեցաւ. Երբար Դա-
պէք եկաւ ձիովը հօնկէ կ'անցնէր՝ Տա-
հէր մարած ձայնով մը սկսաւ ըսել.
Խեղճ օտարական աղքատ մըն եմ.
իրեք օր է որ հոս այսպէս մնացի ու չեմ
կրնար շարժիլ առաջ երթալ որ քիչ
մընծի ուտելու բան ձարեմ. մահուան
վոանգի մէջ եմ, կ'աղաշեմ Իստուծոյ
համար ըլլայ օգնէ ինծի, ու ինքը քեզի

փոխարէն հարիւրապատիկ հատուցա-
նէ „: Դապէք ան ատեն առաջարկեց
Տահէրի որ եթէ կ'ուզէր սիրով իրեն
ձիուն վրայ կ'առնու զինքը ու տունը
կը տանի. բայց խորամանկը՝ “Եմ
կրնար տեղէս շարժիլ, ըսաւ, ամենեւին
ուժ չկայ վրաս „: Ի՞ս լսելով Դապէք
գթաց Տահէրի վրայ, ինջաւ ու առաւ
ձին Տահէրի քով բերաւ, և աշխատե-
լով վերջապէս Տահէրը ձիուն վրայ
հեծցուց. Տահէր մէյմը որ ինքզինքը
ձիուն վրայ գտաւ՝ ասպանդակներով եր-
կու կողմանէ ուժով մը ձիուն փորին
զարկաւ ու սկսաւ վազցնել՝ ըսելով.
“Տահէրն եմ ես, ձիդ առի կը տա-
նիմ „: Երբար ձիուն տէրը Տահէրի ը-
րած խարդախութիւր տեսաւ՝ սկսաւ ե-
տեւն պոռալ կանչել որ մտիկ ընէ իրեն.
Տահէր ապահով ըլլալով որ Դապէք
անկարելի է որ ոսքով ետևեն կարենայ
հասնիլ՝ ետ դարձուց ձին ու հեռուն կե-
ցաւ, որովհետէ Դապէք նետով կրնար
զարնել, ու սպասեց թէ Դապէք ինչ
պիտի ըսէր արդեօք: Եկաւ Դապէք
հանդարտութեամբ մը՝ “Իրուն իմին
ձիս առիր, ըսաւ, որովհետեւ անսանկ ու-
ղեց Իստուած, բարով վայելես. բայց
կ'երդուընցընեմ զքեզ որ բնաւ մէկու
չպատմես բանեցուցած հնարագիտու-
թիւնդ: — Խնչու, հարցուց Տահէր: —
Ո ամս զի կրնայ ըլլալ որ ուրիշ մը
իրաւցնէ հիւանդ ու անկարող ըլլայ ու
առանց օգնութեան մնայ. որով դուն
պատճառ եղած կ'ըլլաս որ ասկէ վերջը
բնաւ մէկը ուրիշի մարդասիրական
գործք մը ընէ՝ վախնալով որ ըլլայ
թէ ինծի պէս խաբուի:

Տահէր այս խօսքերուս վրայ մտածե-
լով սաստիկ զգացուեցաւ, վար ցատկեց
ձիէն ու առաւ կենդանին տիրոջը դար-
ձուց, ու հօն երկուքը իրարու հետ գըր-
կախառնեցան ու Տահէր մէկտեղ ին-
չուան Դապէքի վրանը գնաց, իրեք օր
մէկտեղ կեցան ու փոխադարձ իրարու
եղբայրութիւն երդուընցան:

Ինքամ մը անատօլուցի վաճառական
մը տասը հազար ոչխար յիսուն հովիւ-
ներու ձեւոք յանձնած Դապասկոս ծա-

իւելու կը տանելը . Ճամբան իրեք Պէտուխներու հետ ծանօթացաւ , և մասնաւորապէս մէկուն հետ՝ որուն անունն էր Շադդի սաստիկ բարեկամացաւ : Խրբոր իրարմէ պիտի բաժնուելին՝ Շադդի առաջարկեց անատօլուցին որ մէկմէկու մէջ եղայրութիւն հաստատեն . անատօլուցին ամենահին շահ մը չէր տեսնէր իրեն համար խեղձ պէտուինի մը եղայր ըլլալէն , բայց երբոր անիկայ շատ ստիպեց՝ որպէս զի ձեռքէն խալըսի՝ կամայ ակամայ յանձն առաւ , և իրբեւ առհաւատչեայ եղայրութեան երկու գահեկան և մէկ ընդախոտի տուփ մը իրեն ընծայ ըրաւ : Շադդի առած ստակը իրեն երկու ընկերներուն մէջ բաժնեց ու վկայ բռնեց զիրենք իրեն վաճառականին հետ եղայր ըլլալուն : Խտրը բաժնուեցան , և վաճառականը բոլորովին մոռցաւ եղայրութեն խոստմունքը . Ճամբան երթալու միջոց երբոր Ան-էլ-Ալաք ըստուած տեղը հասաւ , շատ մը պէտուիններ հովիւներուն վրայ յարձըկեցան , բոլոր ոչխարները յափշտակեցին և ամէն բան կողոպտելէն ետքը ելան փախան : Այեղձ վաճառականը յուսահատած գրեթէ միայն շապիկով մը եկաւ Գյամասկոս մտաւ , ու սկսաւ պէտուինները ու Շադդին իրեն կարծեալ եղայրը անիծել . և իրբեւ նենգաւոր անօրէն մը բամբասել ամենուն :

Այս հարուստ աւարառութեն լուրը անապատին մէջ տարածուելով Շադդիի ականջն ալ հասաւ . մէկէն գնաց իր երկու վկաները գտաւ և անոնցմով Առլգան-էլ-Ալրաքին առջեւ ելաւ , որն որ Ան-Էմնուր ցեղին զլսաւորն էր . հոն իմացուց որ ինքը կողոպտուած վաճառականին հետ եղայր եղած էր , և հաւանեցուց զինքը որ վրէժիննդիր ըլլայ արդարութեան , որով կարենայ ինքն ալ եղայրութեան պարտքը կատարել : Առլգանը երբոր վկաներուն ալ լսեց ստիպուեցաւ հետը մէկտեղ Շադդին՝ Ան-ահիմէն ցեղին շեխին տանելու և ըստ իրենց օրինացը բողոքելու , որովհետեւ Ան-ահիմէնի ցեղին էին

յափշտակողները : Շեխը տեսնելով որ Ճար չկայ՝ հարկադրեցաւ ետ դարձնելու ոչխարները . Շադդի համրեց տեսաւ որ բոլորն ալ հոն էին , առաւ ոչխարներն ու հովիւները և դէպ ՚ի Գյամասկոս Ճամբայ ելաւ . երբոր հասաւ՝ քաղքէն դուրս թողուց զանոնք և ինքը միայն Գյամասկոս մտաւ ու սկսաւ եղայրը փնտուել բաւական ատեն ատդին անդին փնտուելէն վերջը տեսաւ որ խանութի մը առջեւը երեսը կախած նստեր էր . ուրախութեամբ առջեւը վազեց , բայց անիկայ կատաղութեամբ երեսը անդին դարձուց . Շադդի շատ աշխատեցաւ զինքը համոզելու որ ոչխարներն հանդերձ հովիւներով քաղքէն դուրս իրեն կը սպասէին : Ա աճառականը նախ կարծեց որ նոր որոկայթմին ալ լարած ըլլայ իրեն , և հազիւ հազ վերջապէս յանձն առաւ պէտուինին ետևէն երթալու : Ամէն մտքին տարակոյսները փարատեցան երբոր իր ոչխարները առջեւը տեսաւ , ուրախութենէն ինքնիրմէ ելած Շադդիի վիզը պլուեցաւ և շնորհակալ ըլլալէն չէր դադրէր . շատ ջանաց իր երախտագիտութիւնը ցուցընելու համար արժանի մէկ ընծայ մը ընել անոր , բայց պէտուինը բաց'ի զոյդ մը հողաթափներէ և մէկ թաշկինակէ մը բնաւ ուրիշ բան չուզեց առնուլ . վերջը իրենց եղայրութեան կապը աւելի անխզելի ընելու համար մէկտեղ սեղանի նստան կերան , և այսպէսով բաժնուեցան իրարմէ :

Այս երկու պատմութիւններն ալ Վագալա Այէկը անունով արաբացւոյ մը հաւաքածու գրուածքին մէջէն են , զորն որ Ա ամարդին Աքելելքէն բերած է : Այէրկրի այս հաւաքածուն լի է , կ'ըսէն , այսպիսի պատմութիւններով և ուրիշ բնական դէպքերով , բարուցնկարագրութիւններով , ուսումնական , աշխարհագրական ու քաղաքագիտական տեղեկութիւններով՝ որոնք ախորժելի կ'ընեն ուսումնականաց իրեն ընթերցումը :